ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » ——————— 2025թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան» հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի՝ 2025 թվականի մայիսի 13-ի թիվ Ն/25619-25 գրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 4-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 13-ի N 18-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 40-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել սույն որոշման հավելվածի ցանկում ներառված «Երևան» հիմնադրամի 4,082,563 /չորս միլիոն ութսուներկու հազար հինգ հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով գույքը:

2. Նվիրատվություն ընդունած գույքն ամրացնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Հավելված

Երևան քաղաքի ավագանու

_____ 2025թ N _____Ա որոշ

ՑԱՆԿ
որպես նվիրատվություն ընդունվող գույքի

ՀՀ դրամ

Հ/Հ	Անվանումը	Ստացման տարին	Չափման միավորը	Փաստացի քանակ	Սկզբնական արժեք	Հաշվեկշռային արժեք
1	Արհեստական եղևնի	01.12.2009	հատ	1	7,719,600	0
2	Արհեստական եղևնիներ	01.12.2010	հատ	2	11,087,700	0
3	Լուսարձակ դասական XIX-րդ դար	10.09.2011	հատ	40	79,850,900	0
4	Բազմագույն դեկեկորատիվ շատրվանային համակարգ	10.09.2011	լրակազմ	1	533,783,640	0
5	Աղբաման մեծ	29.10.2012	հատ	32	2,688,000	0
6	Աղբաման միջին	29.10.2012	հատ	291	22,698,000	0
7	Նստարաններ	29.10.2012	հատ	402	66,330,000	0
8	Արգելափակոց մեծ	29.10.2012	հատ	45	4,950,000	0
9	Արգելափակոց փոքր	29.10.2012	հատ	29	1,218,000	0
10	Արգելափակոց G4000	20.06.2013	հատ	1	700,000	0
11	Մանկական խաղահրապարակ, խաղասարքեր և մարզասարքեր	30.12.2015	հատ	468	199,367,707	0
12	Պլաստմասե մանկական աղբաման,□ հայելի, խաղալիք	30.12.2015	լրակազմ	9	35,326,257	0
13	Մանկական խաղահրապարակի խաղեր /սահելու և ճոճվելու համար/	30.12.2015	հատ	61	72,740,877	0
14	Ձայնային/Թվային համակարգ-քաղաքապետարանի նիստերի դահլիճի համար	28.09.2016	լրակազմ	1	9,514,000	0
15	Գորգ	09.10.2016	քմ	48	1,104,000	0
16	Աթոռներ -բրիֆինգների դահլիճի	09.10.2016	հատ	27	1,485,000	0
17	Բազկաթոռ փայտյա- բրիֆինգների դահլիճի	09.10.2016	հատ	1	250,000	0
18	Դեկորատիվ հաստ կտորից վարագույր	09.10.2016	մ	80.8	1,266,813	0
19	Թափանցիկ կտորով վարագույր	09.10.2016	մ	16.7	183,122	0
20	Արհեստական եղևնի /ուրալյան/ 20 մ բարձրությամբ իր լուսավորությամբ և փայլուն գնդերով	12.12.2016	հատ	1	15,082,112	0
21	Գարեգին Նժդեհի հուշարձան	21.06.2016	հատ	1	69,700,000	0
22	Պարզունակ խաչքարի կրկնօրինակ	12.12.2016	հատ	3	2,016,000	0
23	Բարդ խաչքարի կրկնօրինակ	12.12.2016	հատ	1	768,000	0
24	Գիրք խաչքար	12.12.2016	հատ	1	1,077,600	0
25	Եռաշերտ խաչքար	12.12.2016	հատ	1	960,000	0

26	Սեպագիր -քար	12.12.2016	հատ	4	1,536,000	0
27	Հաշմանդամի շարժական կամրջակ	11.09.2017	հատ	1	1,760,000	0
28	Արևմտյան Հայաստանի խաչքարի բարդ հորինվածքով կրկնօրինակ	30.03.2017	հատ	2	1,536,000	0
29	Հին Ջուղայի խաչքարերի կրկնօրինակ	30.03.2017	հատ	5	3,840,000	0
30	Մեքենայի լվացող սարք << Կերխեր>> մակնիշի	08.10.2019	հատ	1	715,000	0
31	Բելառուս 320 ՄԿ 320.4 գործարանային N 31101125 թողարկման տարեթիվ 2010թ	09.07.2015	հատ	1	2,832,000	0
32	Բելառուս 320 ՄԿ 320.4 գործարանային N31101510 թողարկման տարեթիվ 2010թ	09.07.2015	հատ	1	2,832,000	0
33	Փոշեկուլ վակումային 1220W *2 75LTVC24751	19.05.2025	հատ	1	158,000	143,378
34	Բեմային թափանցիկ հուշարար սարք /սուֆլյոր/	09.10.2025	հատ	1	3,997,500	3,939,185
	ԸՆԴԱՄԵՆԸ				**1,161,073,828**	**4,082,563**

Ման

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նվիրատվության ներկայացվող գույքը ձեռք է բերվել 2010 թվականից սկսած «Երևան» հիմնադրամի կողմից իր միջոցների հաշվին Երևան քաղաքի կարիքների համար: Գույքի հաշվեկշռային արժեքը 04.11.2025թ դրությամբ կազմում է 4,082,563 /չորս միլիոն ութսուներկու հազար հինգ հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ:

Ներկայացվող գույքը տեղակայված և օգտագործում են Երևան քաղաքի 12 վարչական շրջանների շենքերի բակերում, զբոսայգիներում, փողոցներում, թվով 9 մանկապարտեզներում, Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի 1 հասցեի վարչական շենքում, իսկ գույքի որոշ մասը պարբերաբար օգտագործվում է քաղաքի տոնական ձևավորման և մշակութային միջոցառումների կազմակերպման նպատակով:

Այսպես՝ արհեստական եղևնիները օգտագործվում են Օպերայի և բալետի թատրոնի հրապարակում և վարչական շրջաններում՝ ամանորյա տոների ժամանակ: Լուսարձակները և բազմագույն դեկորատիվ շատրվանների համակարգը տեղակայված և օգտագործվում են Հանրապետության հրապարակում: Աղբամանները /միջին, մեծ/, նստարանները, արգելափակոցները /փոքր, մեծ/ տեղադրված և օգտագործվում են Երևան քաղաքի կենտրոնական փողոցներում: Մանկական խաղահրապարակի խաղերը /սահելու և ճոճվելու համար/ և մանկական խաղահրապարակ, խաղասարքերը և մարզասարքերը /մարզագույքը/ տեղադրված և օգտագործվում են Երևան քաղաքի թվով 12 վարչական շրջանների շենքերի բակերում, պլաստմասե մանկական աղբամանները, հայելիները, խաղալիքները օգտագործվում են թվով 9 մանկապարտեզներում: Ձայնային թվային համակարգը, գորգը, անշարժ աթոռները, բազկաթոռը /փայտյա/, դեկորատիվ և թափանցիկ կտորով վարագույրները, հաշմանդամի շարժական կամրջակը, արգելափոց G-4000-ը, փոշեկուլը՝ վակումային և բեմային թափանցիկ հուշարար սարքը /սուֆլյորը/ օգտագործվում են Երևանի քաղաքապետարանի Արգիշտի 1 հասցեի վարչական շենքում: Գարեգին Նժդեհ հուշաձանը, թվով 13 հատ խաչքարերը տեղադրված են Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հանրապետության 3 հասցեի զբոսայգում: Թվով 4 հատ սեպագրերը տեղադրված են Էրեբունի արգելոց-թանգարանի տարածքում: Մեքենայի լվացող սարքը՝ «Կերխեր» մակնիշի օգտագործվում է «ԵԱՍՄ» ՀՈԱԿ-ի կողմից՝ քաղաքային աղբավայրից դուրս եկող

աղբատարների լվացման համար, թվով 2 հատ Բելառուս մակնիշի մինի տրակտորները օգտագործում է «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի կողմից:

«Երևան» հիմնադրամի տնօրենի ժ/պ-ն Երևանի քաղաքապետին հասցեագրված 2025 թվականի մայիսի 13-ի թիվ Ն/25619-25 գրությամբ խնդրել է վերոնշյալ գույքը Երևանի քաղաքային համայնքին նվիրելու ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված:

Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու որոշմամբ ընդունել Երևան համայնքին նվիրվող գույքը:

Նախագծով առաջարկվում է նաև Երևան համայնքի սեփականությանը փոխանցվելուց հետո նախագծի 1-ին կետով նախատեսված նվիրատվություն ընդունած գույքը ամրացնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ